ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 25.07.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/45

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչներ՝

Վ. Մեժունցի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

Լ. Նահապետյանի (լիազորագիր, տրված՝ 28.06.2019թ.)

քննելով Երևանի քաղաքապետարանի կարիքների համար նստարանների և աղբամանների ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանի կողմից 26.06.2019թ. ներկայացված (27.06.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/45 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանը (հետայսու նաև՝ Բողոքաբեր) 26.06.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի կողմից հայտարարված «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7» ծածկագրով բաց մրցույթի (հետայսու նաև՝ Ընթացակարգ) հրավերի տեխնիկական բնութագրում սահմանվել են այնպիսի չափանիշներ, որոնք թույլ չեն տալիս կամ կարող են թույլ չտալ, որ օգտագործվող նյութերը, ապրանքները պետք է լինեն նույն չափսերի, այսինքն չեն սահմանվել շեղումներ:

Տեխնիկական բնութագրով սահմանվել են՝

- պատրաստված է երեք երկաթյա անկյունակով Փ500 (ներսի տրամագիծը)
- վերևի մասում ամբողջ շրջանակով տեղադրված թուջե ձուլվածք Փ100 մմ
- ոտքի բարձրությունը՝ 5 սմ
- փայտյա ձողերի չափերը՝ 500x60x25 մմ
- աղբամանի բարձրությունը՝ 670 մմ
- դույլի չափսերը՝ Փ470x450
- նստարանի ոտքերը թուջե ձուլվածքից (ՀԿ-10 մակնիշի), կողքերին՝ 3 մմ
- մեջքի մասը թուջե ձուլվածքից (ՀԿ-10 մակնիշի), հաստություն՝ 9 մմ
- պատկերի վերևի մասում ձուլված «Երևան» տառերի բարձրությունը 5 սմ
- շրջանակի տրամագիծը՝ 190 մմ
- երկարությունը՝ 1800 մմ
- հաստությունը՝ 40 մմ և այլն, բոլոր չափսերը:

Նույն տեխնիկական բնութագրով ապրանքների հանձնում-ընդունումը սահմանափակում է մասնակիցների շրջանակը, այսինքն հնարավոր չի լինի կտրել փայտ, կամ ձուլել չուգուն, որ չլինեն շեղումներ, շեղումների սահմանային չափ պետք է սահմանվի 3-10 տոկոս:

Բողոքաբերը բողոքով խնդրել է պարտավորեցնել հրավերի տեխնիկական բնութագրում սահմանված ապրանքներում օգտագործվող նյութերի չափսերի համար

թույլատրելի շեղումներ, տեխնիկական բնութագրերում նշված պայմանները համապատասխանեցնել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի և ՀՀ օրենսդրության պարտադիր կիրառման ենթակա պահանջներին:

ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 28.06.2019թ. թիվ 02/61-12459 գրությամբ հայտնել է, որ առաջնորդվելով այն սկզբունքով, որ ի սկզբանե Պատվիրատուն, հայտարարելով «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7» ծածկագրով բաց մրցույթը, նպատակ է հետապնդել Երևան քաղաքի փողոցներում, այգիներում, հրապարակներում արդեն իսկ տեղադրված նույնատիպ «Երևան» գրվածքով և ձուլվածքով նստարանների ու աղբամանների տեղադրում իրականացնել՝ մեծ կարևորություն է տվել այն հանգամանքին, որ նստարանների և աղբամանների արտաքին տեսքն ու ձևավորումը նույնությամբ կրկնօրինակեն նախկինում տեղադրված գույքի արտաքին տեսքին և ձևավորմանը (դիզայնին): Եթե ապրանքի մետաղական մասը նախատեսված չէ հետագա ճշգրիտ մեխանիկական մշակման համար (օրինակ՝ եթե խոսքը չի գնում հատուկ միլիմետրային ճշգրտություն պահանջող հաստոցի մասին), ապա խիստ ճշգրիտ չափեր չեն պահանջվում, քանզի դրանից ապրանքի արտաքին տեսքն ու դիզայնը չեն փոխվում: Վերը նշված նստարանների և աղբամանների պարագայում, քանի որ հետագա ճշգրիտ մշակման խնդիր չկա, ապա թուջե ձուլվածքի համար նախօրոք ստեղծվում է ձևի նմուշ (փայտից, մետաղից և այլն), տեղադրվում է հողի կամ ավազի կաղապարի մեջ, որի մեջ լցվում է թուջը՝ ընդունելով կաղապարի տեսքը: Եվ ցանկացած ձուլվածք, որը ձուլվում է հողի կամ ավազի կաղապարի մեջ՝ ունենում է շեղումներ, որն ինչպես վերը նշվել է, արտաքին տեսքի և դիզայնի վրա էական տարբերություն չի թողնում:

Նույն գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ նպատակահարմար է գտել չներկայացնել տեխնիկական բնութագրում պարտադիր շեղումները՝ արհեստական խոչընդոտներից զերծ մնալու, Երևանի արտաքին տեսքն ու արդեն տեղադրված նստարանների և աղբամանների միատեսակությունը չխախտելու համար:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.07.2019թ. ժամը 10:30-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/45 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար նստարանների և աղբամանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7» ծածկագրով բաց մրցույթ:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով հաստատվել են գնման առարկայի տեխնիկական բնութագիրը:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքը, Երևանի քաղաքապետարանը 28.06.2019թ. թիվ 02/61-12459 գրությունը և կից փաստաթղթերը, «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ

հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Երևանի քաղաքապետարանի կողմից իր կարիքների համար նստարանների և աղբամանների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-19/7» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածով հաստատվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Նստարան «Երևան»	**Նստարանի ոտքերը թուջե ձուլվածքից (ՀԿ-10 մակնիշի), կողքերին 3 մմ** բարձրություն ունեցող տառերով գրված www.yerevan.am կայքի անվանումը միաձույլ: Ոտքերի ներքնամասում ունենա գետնին ամրացնելու հնարավորություն (անցք Φ7մմ): Նստարանի ոտքերը հղկված, նախաներկով պատված, ներկված յուղաներկով (գույնը սև) իսկ www.yerevan.am -ը՝ ոսկեգույն: Նստարանի մեջքի մասը **Մեջքի մասը թուջե ձուլվածքից (ՀԿ-10 մակնիշի), հաստություն 9 մմ:** Պատկերը հայկական զարդանախշ: Պատկերը ներկայացված պատվիրատուի կողմից կամ համաձայնեցված պավիրատուի հետ: Պատկերի վերևի մասում ձուլված **«Երևան» տառերի բարձրությունը 5 սմ** :Մեջտեղի մասում կլոր շրջանակի մեջ **(շրջանակի տրամագիծը 190 մմ)** ձուլվածքով պատկերված է: Երևան քաղաքի դրոշը և զինանշանը: Ձուլվածքը հղկված, նախաներկով պատված, ներկված սև գույնի: Երևանի զինանշանը ներկված ոսկեգույն: Փայտ հաճարե խոնավությունը (մինչև 7): Բաղկացած է մեջքի հենարանից և նստելատեղից: Մեջքի հենարան՝ **Երկարությունը 1800 մմ** **Հաստությունը 40 մմ** Մեջքի հենարանի փայտյա վերևի կիսակլոր և ներքևի ուղիղ մասերը ամբողջ երկայնքով համապատասխանաբար մեկ կտորից Պատրաստված է մեջքը թուջե ձուլվածքի հենարանը տեղադրելու բացվածքով երկարությունը բացվածքի 1110 մմ Վերևի մասը կիսակլոր 52 սմ երկարությամբ Նստելամասը բաղկացած է հինգ փայտյա ձողերից ՝ չափերը 1800x60x40մմ Նստարանի ամբողջ փայտյա մասերը երանգավորված դեղին-ծիրանագույն և լաքապատված տախտակամածային լաքով: Նստարանը հավաքված վիճակում պետք է ունենա ամրացման գոտի , որը ձգվում է ոտքերից դեպի նստելատեղի տակ:Աջ և ձախ կողմում 0.5 " խողովակից 50 սմ երկարությամբ ամրաններ,որոնք ապահովում են ոտքերի զուգահեռականությունը: Մեջքից դեպի նստելատեղի տակի մասին միացված են 2 հատ հարթ մետաղյա ամրաններ (25x3մմ), որը ամրացված է նստելատեղի բոլոր 5 փայտյա ձողերին, որոնք ապահովում են դիմացկունակությունը: Նստարանները մատակարարվում են հավաքված վիճակում, փաթեթավորված պոլիէթիլենային թաղանթով: Արտադրողը պարտավոր է կատարել սպասարկում 1 տարի ժամանակով (գարնանը, աշնանը, գարնանը, 3 անգամ): Թարմացնել գույները, անհրաժեշտության դեպքում ամբողջությամբ ներկել: Փայտյա մասերը բնակլիմայական պայմանների ազդեցությունից առաջացած թերությունների դեպքում վերականգնել լաքապատված մակերեսը: Ըստ պատվիրատուի ներկայացված հասցեների (Երևան քաղաքի տարածքում) : Տեղափոխումն ու տեղադրումը կատարվում է մատակարարի միջոցների հաշվին: Պատվիրատուի պահանջով (քաղաքային միջոցառումների, համերգների ժամանակ) կատարողը պարտավոր է իր միջոցների հաշվին ժամանակավորապես ապամոնտաժել տվյալ

	տարածքի նստարանները, տեղափոխել իր մոտ և ավարտից հետո նորից տեղադրել նույն տեղում: Կից ներկայացվում է նստարանի նկարը: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո էլեկտրոնային հասցեն կտրամադրվի վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանմանը և մատակարարին):
Աղբաման մեծ /ձուլվածքով/	**Պատրաստված է երեք երկաթյա անկյունակով 35x35 Φ500 (ներսի տրամագիծը)** հավաքված երկաթյա հարթ ձողով 40x3մմ, զոդված: Հարթ ձողերի ներքևի մասը 90° ծռված և Φ7 անցքով գետնին ամրացնելու հնարավորությամբ: **Վերևի մասում ամբողջ շրջանակով տեղադրված թուջե ձուլվածք Φ100 մմ** 12 հատ պատկերված Հայկական զարդանախշով: Զարդանախշերից ներքև ամբողջ շրջանակով ամրացված փայտե ձողեր 23 հատ: **Ոտքի բարձրությունը 5սմ:** Երկաթյա կառուցվածքը պատված նախաներկով և ներկված են սև գույնի: **Փայտյա ձողերի չափերը 500x60x25մմ**: Փայտը հաճարե, չոր Գույնը դեղին–ծիրանագույն, լաքապատված տախտակամածային լաքով: **Աղբամանի բարձրությունը 670 մմ:**Կատարողը պարտավորվում է կատարել երաշխիքային սպասարկում մեկ տարի ժամանակով: Աղբամանի տեղադրումը Երևան քաղաքի տարածքում ըստ պատվիրատուի կողմից ներկայացված հասցեների Դույլը պատրաստված է ցինկապատ երկաթյա թիթեղից, բռնակով Դույլի հատակին 5 հատ անցք Φ5մմ **Դույլի չափսերը Φ470 x 450** Տեղափոխումն և տեղադրումն իրականացվում է մատակարարի միջոցների հաշվին: Կից ներկայացվում է աղբամանի նկարը: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո էլեկտրոնային հասցեն կտրամադրվի վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանմանը և մատակարարին):
Ձուլվածքով մեծ աղբամանի ներդիր /մետաղական դույլ/	Պատրաստված է 0,5մմ հաստությամբ ցինկապատ երկաթյա թիթեղից: Բարձրությունը 490 մմ, տրամագիծը 470 մմ, ունի բռնակ Φ4 մմ հաստությամբ ցինկապատ մետաղից: Դույլի հատակին և կողային պատերին ունի անցքեր Φ10 մմ չափով, ջուր չհավաքելու համար: Դույլի պատերին երկու շարք ամրության եզրեր: Տեղափոխումն ու տեղադրումը ըստ պատվիրատուի ներկայացված հասցեների: Կից ներկայացվում է աղբամանի ներդիրի՝ մետաղական դույլի նկարը, գծագիրը: Տեղադրումն իրականացնել վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանման որևէ աշխատակցի ներկայությամբ, տեղադրումն իրականացնելուց հետո պատվիրատուին ներկայացնել տեղադրված գույքի լուսանկարը՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով (պայմանագիրը կնքելուց հետո էլեկտրոնային հասցեն կտրամադրվի վարչական շրջանի համապատասխան ստորաբաժանմանը և մատակարարին):

Այսպիսով՝ Բողոքաբերը պնդել է, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով սահմանված հստակ պարամետրերը (շեղումների բացակայություն) սահմանափակում են հնարավոր մասնակիցների շրջանակը: Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ արձանագրում եմ հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի

կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Վերոհիշյալ նորմերի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեխնիկական բնութագիրը պետք է լինի հնարավորինս հստակ՝ ներառելով գնման առարկայի բոլոր հատկանիշները և միակ պայմանն այն է, որ տեխնիկական բնութագիրը չպետք է պահանջ կամ հղում պարունակի որևէ **առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին,** բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց, իսկ հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Դրա հետ մեկտեղ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների պահանջներին:

Ուսումնասիրելով Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը՝ գտնում եմ, որ այն կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության համապատասխան և չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ տեխնիկական բնութագրի կազմմանը ներկայացվող պահանջներին: Միևնույն ժամանակ գտնում եմ, որ Ընթացակարգի տեխնիկական բնութագիրը չի հակասում նաև Օրենքի 3-րդ հոդվածով սահմանված գնման գործընթացի կազմակերպման սկզբունքներին, քանի որ գնման առարկայի հստակ չափսերի մատնանշումը չի հանգեցնում գնման առարկայի՝ միայն մեկ կոնկրետ մոդելի կամ մեկ արտադրողի կողմից արտադրված լինելուն դասվելուն և շեղումների բացակայությունը էականորեն կարող է սահմանափակել մասնակիցների շրջանակը, քանի որ նման պարամետրերով գնման առարկա արտադրվում է կամ մատակարարվում է միայն մեկ անձի կողմից: Այլ գնման առարկայի չափսերի հստակ մատնանշումը հիմնավորված է Պատվիրատուի կարիքին համապատասխան, այդ թվում նաև՝ Երևան քաղաքում արդեն իսկ տեղադրված նստարանների և աղբամանների միատեսակությունը պահպանելու համար, ընդ որում՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Պատվիրատուն իր իսկ գրությամբ հայտնել է, որ ձուլվածքը, որը ձուլվում է հողի կամ ավազի կաղապարի մեջ՝ ունենում է շեղումներ, որն արտաքին տեսքի և դիզայնի վրա էական տարբերություն չի թողնում, ուստի խիստ հստակ չափսեր չեն պահանջվում: Հետևաբար իրականում ոչ էական շեղումներ հնարավոր են, որոնք ընդունվում են Պատվիարտուի կողմից:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

ՀՀ քաղաքացի Սասուն Աբրահամյանի կողմից 26.06.2019թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**